**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.1**
**ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/27-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **14 հուլիսի 2026թ.**

2026թ. հուլիսի 14-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ հանդերձանքի ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/27-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ4 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Ֆարսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետը, |
| Ա. Բաղդասարյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը |
| Կ. Աբրահամյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Ա. Գալստյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Ֆարսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է չորս անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ և ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, տեղեկացվեց, որ 13.07.2026թ-ին ժամը 10:46:10-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի Պատվիրատու, խնդրում եմ տալ

պարզաբանում թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/27-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ4 ծածկագրով հրապարակված մրցույթի հրավերով սահմանված զրակաբաճկոնի արտաքին տեսքի վերաբերյալ կարող եք տրամադրել որևէ նկար, էսքիզ կամ տեղում նմուշի ուսումնասիրության հնարավորություն:»:

14.07.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի մրցույթի մասնակիցներ, բնութագրում նկարագրվող զրահաբաճկոնի արտաքին տեսքը և նյութաբանությունը ուսումնասիրելու համար ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչությունում 14.07.26թ. ժամը 16:00-ին կկազմակերպվի ցուցադրություն: Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 104: Ցուցադրությանը մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 14.07.26թ. ժամը 15:00 զանգահարել ներքոնշյալ հեռախոսահամարով և գրանցվել: Ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով: Հեռախոսահամար՝ 077-53-58-46:»:

2. Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 1-ի:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Փարսյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Ա. Բաղդասարյան ____________

Կ. Աբրահամյան ____________

Ա. Գալստյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________